ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետի 07.07.2011թ թիվ 63 կարգադրությամբ ստեղծված «Գենդերային հարցերով զբաղվող» Շիրակի մարզային հանձնաժողովի 2015թ.երկրորդ նիստի 19.06.2015թ.

Մասնակցում էր հանձնաժողովի 9 անդամ

1. **Օրակարգ 1. Գենդերային անհավասարություն առաջացնող պատճառները**
2. **Գենդերային խնդիրները և զարգացումները**
3. **Քննարկում**
4. **Այլ հարցեր**

1. Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ Հ. Արշակյանին, ով ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց օրակարգի հարցերը: Օրակարգը հանձնաժողովի անդամների կողմից հաստատվեց միաձայն:

2. Լսեցին՝ Հանձնաժողովի անդամ Լուսինե Գինոսյանին, ով ներկայացրեց գենդերային խնդիրները հայ իրականության մեջ և դրանց պատմական զարգացումները:

3. Լսեցին՝ Հանձնաժողովի անդամ Լիլիթ Գորգինյանին, ով ներկայացրեց գենդերային նքաղաքականությանն ուղղված պետական քաղաքականության ուղղությունները:

4. Լսեցին՝ հանձնաժողովի նախագահ Հ. Արշակյանին, ով խոսեց այն մասին թե ինչպես կարող է սոցիալական քաղաքականությունն ազդել գենդերային քաղաքականության վրա:

Արտահայտվեցին՝ 1. Գայանե Կարապետյանը

Նա խոսեց այն մասին, թե այսօր որոնք են գենդերային քաղաքականության իրավական հիմքերը և որքանով են դրանք գրոծուն մեր հասարակության մեջ: Կարևոր է անընդհատ իրազեկել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին:

3. Թերեզա Գրիգորյանը

Նա խոսեց համայնքում մինչ օրս ձեռք բերած գենդերային զարգացումների վերաբերյալ, սակայն դա բավարար համարել չի կարելի, գուցե անհրաժեշտություն կա իրազեկման նոր տարբերակների մշակման:

5 Սամվել Գրիգորյանը

Նա ասաց, որ ԶԼՄ-ները պարբերաբար անդրադառնում են գենդերային թեմաներին, ներկայացնում են կատարված աշխատանքները և զարգացումները:

Նիստը որոշեց.

1. Ըստ ոլորտների մշակել իրազեկման նոր տարբերակներ և հաջորդ նիստին ներկայացնել քննարկման:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արշակյան

Քարտուղար՝ Լ. Գորգինյան